

Արձանագրություն N17

2025 թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 15.00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

Նիստը մեկնարկեց ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանի ողջույնի խոսքով: Վերջինս, շնորհակալություն հայտնելով մասնակիցներին, կարևորել է այս ձևաչափով քննարկումների անցկացումը: Միաժամանակ, ընդգծեց հարթակի ակտիվ գործունեության կարևորությունը՝ նշելով, որ ինչպես ցույց են տալիս աշխատանքների արդյունքները քննարկված հարցերը թույլ են տալիս իրագործել ավելի արդյունավետ վարչարարություն և որոշումներում լինել ավելի պրոֆեսիոնալ, ավելի փաստահեն և հնարավորինս ներառական ձևով հաշվի առնելով հարկ վճարողների, ինչպես նաև մասնագետների տեսակետները:

ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ վերջում անդրադարձ կկատարվի նաև թվայնացման հարցերին՝ հաշվի առնելով, որ վերջին շրջանում պարբերաբար բարձրաձայնվում են խնդիրներ և կներկայացվեն այդ մասով կատարված աշխատանքները: Հաջորդիվ, ներկայացվեց նիստի օրակարգը, որում ներառված առաջին հարցը վերաբերում է առևտրի օբյեկտից ապրանքի գնման դեպքում, երբ վճարումը կատարվում է առևտրի օբյեկտում, սակայն ապրանքը մատակարարվում է այլ տարածքից (օրինակ՝ պահեստից)՝ ՀԴՄ կտրոնի տրամադրման, հաշվարկային փաստաթղթերի կազմման, դուրսգրման և որպես ուղեկցող փաստաթուղթ համարվելու հետ կապված օրենսդրական կարգավորումների ներկայացմանը և առկա խնդիրների քննարկմանը:

ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ ներկայումս կատարվում է փաստաթղթավորման հետ կապված խնդիրների գույքագրում, այսինքն՝ ինչ խնդիրներ են առաջանում փաստաթղթավորման ընթացքում, գործնական կիրառության ընթացքում, ինչպես նաև հսկողական աշխատանքների ժամանակ: Նշվեց, որ խնդրո առարկա հարցը վերաբերում է խանութներից գնումների դեպքում (երբ ապրանքը առաքվում է ոչ թե նույն օրը, այլ մեկ այլ օր) վաճառողի կողմից ապրանքի առաքման համար հաշվարկային

փաստաթղթի դուրսգրմանը: Նշված դեպքում փաստաթղթավորման մասով որոշակի բարդություններ են առաջանում և գործնականում, և հսկողական առումով: Նախատեսվում է քննարկել և գտնել արդյունավետ լուծումներ, փաստաթղթավորման գործընթացը պարզեցնելու համար, որպեսզի լրացուցիչ ջանքեր չպահանջվեն:

ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանը էլ նշեց, որ ներկայումս էլ գործում է փաստաթղթավորման համակարգ և ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված են կարգավորումներ գործարքի ամբողջական փաստաթղթավորման համար: Խնդիրը կայանում է նրանում, որ բարձրաձայնվում են խնդիրներ, որոնց կարգավորման նպատակով փորձ է արվում գտնել ավելի արդյունավետ տարբերակ, որ ապահովվի փաստաթղթավորումը ամբողջ շղթայի համար և վարչարարությունը չտուժի :

Հաջորդիվ, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը ներկայացրեց հարցի կարգավորման երկու տարբերակ: Առաջինը, առաջարկվում է ՀԴՄ կտրոնի տպագրումից հետո, երբ ապրանքն առաքվում է պարտադիր ուղեկցող փաստաթղթի դուրսգրում՝ նշելով ՀԴՄ կտրոնի համարը: Երկրորդ տարբերակով առաջարկվում է, որ ՀԴՄ կտրոնում նշվի ապրանքի նշանակման հասցեն: Միաժամանակ, նշվեց, որ կարող են ներկայացվել նաև այլ տարբերակներ կամ նշված տարբերակները կարելի է զարգացնել և գտնել լավագույն տարբերակը:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, թե ինչ խնդիր կա, որ ցանականում են լուծել նախատեսվող փոփոխությունով՝ ՀԴՄ կտրոնում հասցե ավելացնելով: Նշվեց, որ նախատեսվող փոփոխությունը դժվարություններ է ստեղծելու հարկ վճարողի համար, այսինքն՝ հասցեն սխալ նշելու համար հարկ վճարողը ենթարկվելու է պատասխանատվության: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանը նշեց, որ ցանկացած ապրանք մի կետից մեկ այլ կետ տեղափոխելիս պետք է ուղեկցվի փաստաթղթով, այսինքն՝ ուղեկցող փաստաթուղթը պետք է ամբողջական լինի և ապահովի տեղի ունեցած գործարքի բովանդակությունը: ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը էլ նշեց, որ նախատեսվող կարգավորումը հեշտացնելու է հարկ վճարողի համար հաշվարկային փաստաթղթի դուրսգրման գործընթացը, արդյունքում ստացվում է, որ ՀԴՄ կտրոնում հասցեն նշելով, փաստաթուղթ

դուրս գրելու անհրաժեշտություն չկա: Միաժամանակ, նշվեց, որ փորձում են պարզեցնել, հեշտացնել, միևնույն ժամանակ հնարավորություն թողնելով հսկողություն իրականացնելու համար:

«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ նախագահ Հ. Ավագյանը նշեց, որ կողմ է ՀԴՄ կտրոնում առաքման հասցեն նշելու տարբերակին, քանի որ արդյունքում լրացուցիչ փաստաթուղթ դուրս գրելու անհրաժեշտություն չկա: Միաժամանակ, նշեց, որ կարելի է դիտարկել հասցեն ճշտելու հնարավորության նախատեսումը:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանն առաջարկեց, որ հասցեն փոփոխելու հնարավորություն լինի: Միաժամանակ, առաջարկեց, որ որոշակի շեմից սկսած պարտադիր լինի նախատեսվելիք փոփոխությունը, օրինակ՝ կարելի է նախատեսել 300 հազար դրամից բարձր գործարքների մասով: Վերջինս առաջարկեց նաև, որ նախատեսվի կարգավորումներ, որ ՀԴՄ կտրոնը տպագրվի, այնուհետև վերցվի կանխիկ դրամը: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ կդիտարկվեն ներկայացված առաջարկությունները և կնախատեսվեն համապատասխան կարգավորումներ:

«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ ներկայացուցիչ Մ. Կոստանդյանն առաջարկեց նախատեսել հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման կարգավորումներ նաև ավտոպահեստամասերի կամ ընդհանուր տեխնիկայի համար, քանի որ նշված ապրանքներն ավելի շատ վերադարձվում են գնորդների կողմից՝ չհամապատասխանելու պատճառով: Փաստաթղթերի անընդհատ ճշգրտման պատճառով հարկ վճարողը կարող է համարվել ռիսկային: Նշվեց նաև, որ կարելի է որոշակի ժամկետ նախատեսել փաստաթուղթ դուրս գրելու համար: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ առանց փաստաթղթի դուրսգրման ապրանքի մատակարարումը ճիշտ չի համարում: Ինչ վերաբերում է ռիսկային համարվելու հարցին, նշվեց, որ հարցը կարելի է դիտարկել ռիսկերի տեսանկյունից, ինչպես նաև կարելի է ներկայացնել բացատրություն, որ վերադարձները պայմանավորված են ոլորտի առանձնահատկություններով:

Ամփոփելով ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ ընդհանուր առմամբ կարծես առկա է կոնսենսուս հարցի կարգավորման վերաբերյալ: Նշվեց նաև, որ ընդունելի են ներկայացված առաջարկությունները՝ հասցեի փոփոխության և որոշակի շեմից սկսած կիրառելու հնարավորության նախատեսման վերաբերյալ:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, թե արդյոք գնահատվել է փոփոխության արդյունքում ստվերի կրճատումը որքան է կազմելու, ռեսուրսի ծախսման արդյունքում ինչ է ակնկալվում ստանալ:

ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ փոփոխության արդյունքում առաջին հերթին հեշտանում է տնտեսվարողի կյանքը, վարչարարությունը քչանում է, քանի որ փաստաթղթերի առկայության դեպքում ավելի հեշտ վարչարարություն է իրականացվում: Հաջորդիվ, նշվեց, որ հստակ վիճակագրության առկայության պարագայում հնարավորություն կլինի գնահատել ստվերը: Միաժամանակ, նշվեց, որ ընդհանուր առմամբ փոփոխությունները կհանգեցնեն վարչարարական բեռի և վարչական ռեսուրսների էական խնայողության:

Հաջորդիվ, ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանը ներկայացրեց օրակարգում ներառված երկրորդ հարցը՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ ընդունված օրենսդրական կարգավորումները: Ներկայացվեց սեպտեմբերին ուժի մեջ մտած կարգավորումները, մասնավորապես՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը բջջային հավելվածի միջոցով փոխանցվելու դեպքերը՝ նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքը այլ ապրանքի (այդ թվում՝ կիսաֆաբրիկատի) արտադրության (պատրաստման) մեջ կամ սեփական կարիքների համար օգտագործում, նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի (բացառությամբ խմբային փաթեթավորման և ապրանքի հավաքածուի) մասնակի օտարում, ծառայության մատուցման ընթացքում նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի օգտագործում, եթե դրա արժեքը ներառվում է ծառայության արժեքի մեջ: Հաջորդիվ նշվեց, որ նույնականացման միջոցներով դրոշմավորված

ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու՝ շահագործումից հանելու դեպքերում այդ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունը փոխանցվելու է մոնիթորինգի համակարգ՝ մինչև դրոշմավորված ապրանքի նույնականացման միջոցը շրջանառությունից հանելը՝ շահագործումից հանելը՝ հետևյալ դեպքերում՝ նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի դուրս գրում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1261-Ն որոշմամբ սահմանված կարգով փաստաթղթավորված կորուստ համարվելու դեպքում, նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի բռնագրավում կամ հոգուտ պետության հրաժարում, նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի արտահանում, նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի՝ փորձաքննության կամ լաբորատոր փորձարկման նպատակով դուրսգրում, ներմուծողի կողմից նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի վերադարձ մատակարարին: Միաժամանակ, առաջարկվեց ներկայացնել նույնականացման միջոցների հետ կապված այն խնդիրները, դեպքերը, որոնց մասով կարգավորումներ նախատեսված չեն, որպեսզի այդ մասով որոշումը լավարկվի:

«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ նախագահ Հ. Ավագյանը նշեց, թե ինչու են ծանրաբեռնում հարկ վճարողներին, որպեսզի վերջիններս նույնականացման միջոցների հաշվառումից հանելու համար տեղեկություն ներկայացնեն, նույնիսկ ներքին սպառման դեպքում: Դա ինչ հարց է կարգավորում: Միաժամանակ, նշվեց, որ հիմնականում առկա էր խնդիր հանրային սննդի ոլորտում նույնականացման միջոցների հաշվառումից հանելու վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելու մասով, սակայն որոշմամբ նախատեսված կարգավորումների համաձայն բոլորին պարտադրվում է տեղեկության փոխանցումը: Արդյունքում բարդանում է տնտեսվարողի կյանքը՝ թույլ չտալով գործել ավելի ճկուն: Վերջինս նշեց, թե արդյոք հնարավոր չէ ապրանքը ներմուծելիս ստուգել և ոչ թե հսկել ամբողջ շղթան՝ չբարդացնելով տնտեսվարողների կյանքը: Միաժամանակ, հարցրեց, թե արդյոք ռազմավարությամբ նախատեսվել է, թե նշված փոփոխությունների, ինչպես նաև թվայնացման արդյունքում ՊԵԿ անձնակազմը տարեկան ինչ-որ տոկոսով կրճատվելու է:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, որ խնդիրներ կային հիմնականում հանրային սննդի ոլորտում, հարցը քննարկվել է և որոշվել է կարգավորել խնդիրները: Որոշմամբ նախատեսված կարգավորումների համաձայն ստացվում է, որը բոլորը պարտադիր ինչ որ փուլում պետք է փոխանցեն նույնականացման միջոցը շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը: Մինչդեռ անհասկանալի է, թե վաճառքով չգբաղվելու դեպքում, երբ ապրանքն օգտագործվում է ներքին սպառման համար, ինչու պետք է տնտեսվարողը սարք գնի տեղեկություն փոխանցելու համար: Ի վերջո, դրոշմապիտակի, նույնականացման միջոցի նպատակը վաճառքի հետագծելիության ապահովումն է: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ սարք գնելու անհրաժեշտություն չկա, տեղեկությունը փոխանցվելու է բջջային հավելվածի միջոցով: Միաժամանակ, նշվեց, որ նպատակը կեղծիքներից խուսափելն է, որպեսզի նույն նույնականացման միջոցը չօգտագործվի մի քանի տեղ: Նշվեց նաև, որ հետագայում գործընթացն էլ ավելի հեշտ կլինի, երբ հաշվարկային փաստաթղթերում կարտացոլվեն նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունները, ապա փաստաթղթի միջոցով հնարավոր կլինի միանգամից նշել, որ ապրանքներն օգտագործվելու են ներքին սպառման համար:

ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանն անդրադարձավ նույնականացման միջոցների համակարգի ներդրման էվոլյուցիային: Նշվեց, որ ինչպես ԵԱՏՄ երկրներում, այնպես մի շարք եվրոպական երկրներում կիրառվում է նույն համակարգը: Համակարգի ներդրման սկզբնական շրջանում ֆիքսվում էր շղթայի սկիզբը, այսինքն՝ արտադրողին և ներմուծողին: Հաջորդ փուլով ավելացավ նաև վերջում ֆիքսումը, սակայն այդ դեպքում ստվերի վերահսկողության հարցը չլուծվեց: Քանի որ կային բացեր, անհրաժեշտություն առաջացավ նաև մյուս փուլերում էլ ֆիքսել: Հաջորդիվ նշվեց, որ համակարգը հնարավորություն է տալիս տեղեկություն ստանալ արդյունավետ վարչարարություն իրականացնելու համար, ինչն էլ կբերի ստվերի կրճատմանը: Ինչ վերաբերում է ներմուծված ապրանքների ստուգման հարցին, նշվեց, որ հնարավոր չէ ամբողջությամբ ստուգել ներմուծված ապրանքները, դա տնտեսության համար խնդիրներ կառաջացնի: Նշվեց նաև, որ անթույլատրելի է տոտալ հարկային և մաքսային վերահսկողությունը,

քանի որ դա նշանակում է տնտեսության անոթների փակում: Առանց նշված լուծման հնարավոր չէ նվազեցնել ստվերը: Նշվեց նաև, որ համագործակցության արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա կձևավորվի բազա, ինչն էլ հնարավորություն կտա իրականացնել վերլուծություններ, որն էլ կնպաստի ստվերի նվազեցմանը: Անդրադառնալով ռազմավարության մեջ անձնակազմի կրճատման հարցի վերաբերյալ նշում կատարելուն, նշվեց, որ բացարձակ ճիշտ չէ, որ ռազմավարության մեջ նշվի, որ մարդկանց կրճատում է լինելու: Բացի այդ, առավել պետք է կարևորվի, թե նշված գործիքների արդյունքում ստվերը որքան կկրճատվի: Միաժամանակ, նշվեց, որ գնահատականների համաձայն համակարգի արդյունավետ կիրառման արդյունքում ստվերը հնարավոր կլինի կրճատել մոտ 20 տոկոսով:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը հարցրեց, թե ինչու պետք է մեծ տարայով ապրանքները, օրինակ՝ 200լ տարողությամբ յուղերը դրոշմավորվեն դրոշմապիտակներով կամ նույնականացման միջոցներով, եթե դա չի սպառվում մանրածախ առևտրում և վերահսկողության հարց չկա: Ընդ որում, հաշվարկային փատաթղթերով արտացոլվում է գործարքը: Առաջարկեց ինչ-որ քանակից ավելի համար չնախատեսել դրոշմավորում: «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ ներկայացուցիչ Մ. Կոստանոյանն էլ նշեց, որ մեծ տարաներով ապրանքների դրոշմավորումը նվազեցնում է նշված ապրանքների կեղծման հնարավորությունը: Նշվածի հետ կապված՝ ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ հարցը կոփտարկվի այն տեսանկյունից, որ նախ կգույքագրվեն այն ապրանքները, թե որոնք են սպառվում սպառման ցանցում, որոնք ոչ: Դրանից հետո նոր կարելի է քննարկել չդրոշմավորելու նպատակահարմարության հարցը:

«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ ներկայացուցիչ Մ. Կոստանոյանն առաջարկեց փոքր չափերով ապրանքների համար չնախատեսվի նույնականացման միջոցներով դրոշմավորում կամ գոնե այդպիսի ապրանքները դրոշմավորվեն խմբերով, քանի որ նույնականացման միջոց ստանալու համար վճարվող գինը, նամանավանդ փոքր չափերով ապրանքների դեպքում, տնտեսվարողների համար մեծ ծախսեր է առաջացնում:

ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանն, անդրադառնալով նույնականացման միջոցի գնի հարցին, նշեց, որ Ազգային ժողովում ընդունված օրենքով կառավարությանը տրվել է գինը սահմանելու լիազորություն: Ներկայումս շարունակվում են ակտիվ քննարկումները և հունվարի 1-ից սկսած կառավարության որոշմամբ կսահմանվի միասնական գինը: Հետագայում արդեն կդիտարկվի, թե արդյոք գնային քաղաքականությունը թույլ կտա ունենալ տարբերակված գնային մոտեցում:

«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ նախագահ Հ. Ավագյանը հարցրեց, թե արդյոք հնարավոր է նախատեսել, որ որոշակի ապրանքախմբերի համար նույնականացման միջոցը լինի անվճար: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ կարող են հանդես գալ կոնկրետ առաջարկով, որն էլ կքննարկվի:

«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ նախագահ Հ. Ավագյանն առաջարկեց, որ այն դեպքի համար, երբ ապրանքն օգտագործվում է ներքին սպառման համար տեղեկությունը չուղարկելու համար պատասխանատվություն չնախատեսվի կամ տուգանքի չափը նվազեցվի: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ պարզ չէ, թե պատասխանատվության չափի նվազումը ինչ հարց է կարգավորվելու: Բացի այդ, պատասխանատվության չափը նվազեցնելու կամ պատասխանատվություն չնախատեսելու պարագայում տեղեկությունը չի ուղարկվելու:

Նույնականացման միջոցներով դրոշմավորման գործընթացը լավարկելու նպատակով՝ ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանն առաջարկեց մեկ ամսվա ընթացքում ներկայացնել մտահոգիչ հարցերն ու առաջարկները, որոնց լուծման հնարավոր տարբերակները կքննարկվեն առաջիկա նիստում:

Նիստի վերջում ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանն անդրադարձավ ՊԵԿ էլեկտրոնային համակարգերի լավարկման ուղղությամբ իրականացված վերջին ծրագրային բարելավումներին: Մասնավորապես՝ ներկայացվեց համակարգի հետ կապված խնդիրները և նշվեց, որ իրականացվում է համակարգերի աուդիտ՝ խնդիրները ախտորոշելու նպատակով, որի արդյունքում կամ կլինի համակարգի նոր տարբերակ կամ հինը կկատարելագործվի: Դրան զուգահեռ իրականացվում է նաև սերվերային բազաների դիվերսիֆիկացում, ինչպես նաև սերվերային բազաների հզորացում:

«ԶԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ տնօրեն Ա. Ավետիսյանը ներկայացրեց թվայանցման ուղղությամբ ՊԵԿ-ի կողմից իրականացվող աշխատանքները: Միաժամանակ, անդրադարձավ համակարգի ծանրաբեռնվածությանը, ինչպես նաև համակարգի աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների պատճառներին: Ներկայացվեց թվային տվյալներ ներկայացվող հաշվետվությունների, հարկային հաշիվների, ՀԴՄ կտրոնների քանակի վերաբերյալ: Մասնավորապես, նշվեց, որ նախորդ տարվա համեմատ ամսվա կտրվածքով ավելացվել է ՀԴՄ կտրոնների քանակը միջինում 15 միլիոնով, հարկային հաշիվների քանակը՝ 600 հազարով: Նշվեց նաև, որ մեկ ժամվա ընթացքում տպագրվում է ավելի քան 200 հազար ՀԴՄ կտրոն:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

X 
ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ
Signed by: HAKOBYAN EDUARD 3001910811

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ